Պաշտօնապահ եմ, կընաս խօսել.
Կանաչութիւնդ զագտնիք մըն է,
Բոյըդ արդեօք լիզու մըն է:

Եթէ ճիշտ է, խօսիք մեղմիկ
Խորհրդաւոր պատզամարեք,
Իսկ եթէ ոչ, ննջէ լոիկ,
Սրտիս վրայ թարմ ու թիթի:

Նա փափուկ է, և սպիտակ,
Անկեղծ կսեն նահ՝ և զեռ,
Ով որ գիտնայ զայն զըաւել,
Կընայ բանալ անհուն զանձեր:

Բայց նէ լուրջ է և խստասիլտ
Կընայ վիշտ մը ինձ պատճոել,
Ծաղիկ վախնանք իւր զայլոյթէն,
Բան մի ըսեր ինձ, թնդ երազել:

Թարդմ. Զապել Ալեանակ





ԿՈՏՈՐԱԾԸ ՇՈՒՇՈՒՄ

Ա՞խ, այդ գիշերը ... սարսափելի էր ...

Ամբողջ թաղաքը լուսաւորուել էր հրդէնի հոկալական լոյսով ... : Մութ գիշեր էր, բայց հրավառուած էր թաղաքի ամենամեծ թաղերից մէկը և հրդէնի լոյսը լուսաւորում էր ամբողջ քաղաքը, երկինքը կարմրել էր, զուցէ զալրովթից ... բայց ող գիտէ, զուցէ և ամօթից ... : Հրդէնի հրեղէն լեզուները կարծես վկայում էին, որ մարդ արարածը վայրենութեան գագաթնակէտին հասած րոպէներում կարող է երկնալին լուսաւի գերը յանձնել հրդէնին ... :

Ա՞խ, այդ գիշերը ... լուսինը չկար և ասաղերը կարծես ամաչելով թաղնուել էին, երեմն գաղտնագողի դիտում էին մարդկալին արեան, կրակի, կրկէսին ... , զուցէ նոյն րոպէնին նրանք մտածում էին, թէ ինչու մէկն աշխատում է շէնացնել զեղեցկացնել, զրախտ գարծնել երկիրը, ձգտում է սիրոյ, ծշմարտութեան, բարոյ, զեղեցկութեան, իսկ միւսը՝ աւերել ... թալանել, ալանդակել, ոտնակոխ անել այն ամենը, ինչ որ արուած է դարերի ընթացքում անխոնչ անձնագոհ աշխատանքով ... :

Հրդէնը լափում էր քրտնաշան հայի շէն աները ... : Ալլուում մոխիր էր դառնում ամեն ինչ ... տուն, տեղ, խանութ, գպրոյ, մի խօսքով ամենը ... ամենը ... , իսկ մարդիկ զիխները կորցրած փախչում էին ... :

Փախչում էին մեծ ու փոքր, կին, տղամարդ, փախչում էին վայնասունով, լոլով ... խելաղարի պէս, որը երեխան զրկած, որը պառաւ մօր թեից բռնած, որը իւր հիւանդ կնոշ ձեռքից բռնած, մեծ ու փոքր կապոցները շալակներին ... որը՝ մերկ, որը՝ կիսաշնուր էին անիծելով, նզովելով, յուսահատ ... : Անէծքը ... բայց ում, ինչ իրենք էլ չգիտէին ... : Այդ բոպէներում նրանք միայն անիծում էին, զուցէ և անըդապարած ... : Փախչում էին միմեանց հրելով, աշ ու մախ, յետ ու առաջ, առանց հաշիւ

Լայ, աղաղակ, անէծք ու հրացաների որոտը, գնդակների վզվոցը, այրող աների, փլող պատերի զզրդիւնը, երկաթէ թիթեղների շաճիւնը, մարդկանց աղեկտուր ու լուսաւող պատերինը ու լայը ... , միախառնուելով միմեանց հետ, կաղմում էին մի գժոխալին

համերգ, որի ներգանակութիւնը նոյն րոպէին հրծւանը, հիացմունք չէին պատճառի նոյն իսկ հայակեր հեղինակներին — գժոխալին կրկէսի կաղմակերպողներին ... :

— Գալիս են ծեղ մատաղ, մի տեղ ... մի տեղ առուէք ... :

— Տուն ալրուեց ... խանութներս ալրուեցին ... ոչնչացան ... :

— Երկուսին, երկուսին էլ՝ շահել շիւան բալիկներիս զիւլախորով արին ... աման ... վայ, բռուանաս, Աստուած, էս ինչ կրակ էր ... վայ աման ... , բռաւում լալիս էր որդեկորոյս գժբաղդ մայրը ... :

Լիքը խանութներից միայն այս է մնացել, այս ... , խելագարուածի նման ծածանում է օդի մէջ մի թաշկինակ, հայ վանառականը:

— Տուն ու տեղս նրան մատաղ, զուխ զնելու տեղ չունեմ հոգս չէ, միայն թէ նա, նա աղատուի ... : Ա՛խ Սաքո ... որտեղ ես, շանիդ զուրբան ... , ասում է հայրը, որի միակ որդին հերոսաբար կուռում էր զիրքերում:

— Ագուլեաց եկեղեցին ախոռ են դարձել, պղծել են և կրակել ... էլ ուր է Աստուած ... :

— Ես քայլել չեմ կարող, մալրիկ, զրկիր ինձ ... :

Հալրիկը մնաց, մալրիկ ... նա հեռու է, էլ չի երեսում, իսկ գնդակները մեղ են հասնում ... չլինի ... :

— Քաղցած եմ, մալրիկ, վախենում եմ ... այս ինչ լոյս է ... այսակս լոյս ես չեմ տեսել ... մալրիկ, ինչու վաղում ես, ինչու ամենքը վախչում են ... :

— Սուս, բալաս, թուրքերը գալիս են, վազիր, նրանք են կրակ տուել ... տներն է ալրուում, այդ հրդէնի լոյսն է ... :

— Հապա ինչու մինչեւ ալժմ նրանք չեն կրակենել ... :


— Վազիր, շատ մի' խօսիր, հրդէնը մօտենում է, ամեն ինչ ալրում, լափում է ... :

— Մարդկանց էլ ... :


— Այս, շատ խօսողներին էլ ... : Երեխան սարսափած ու շունչը կարած վաղում է մօր հետեւից ... :

Գնդակների որոտ ... , տանիքների ճարճաթիւն ... , կանանց, երեխաների լաց ու աղաղակ ... անէծք ու նզովք ... , հրդէն ու արիւն ... արիւն ու արիւն ... :

Երկինք հասնող հրեղէն լաւան, որ քամու հոսանքից հակալական թրուիչըներ էր անում ... այս բոլորը միասին մի քաօս էր ... մի գժոխիք էր ... երկինք ու երկիր կարծես իրաք էին խառնուել ... , ծխի ու ամպի քուրաները իրաք խառնուած, պինդամուր գրկած անվերջ պտոյտներ էին



Քործում ու մութ զիշերը ու զիշեր գարծնում . . . : Հրդեհը մօտենում էր քաղաքի կենարոնին, խանութպաններն ու տան տէրերը յուսահասութեամբ փողոց էին նետում եղածը,



տարանքը, կահ կարասիքը ու աղաջում էին օդնել, աղատել . . . : Մարդիկ աղատում էին հրդեհից, բայց աղատում էին լոկ իրենց համար . . . մարդ գաղանները իրարու խառնուած մի զաղրեի ստոր դործ էին կատարում . . . յափշաակում, թալանում էին այն ամենը, ինչ որ պատահում էր . . . եղբայրը եղբօր ունեցածն էր կողոպտում . . . :

Հրդեհ . . . թալան . . . արիւն . . . անէծք . . . :
Հեռուից լսւում էր գնդակների որոսի տարափի տակ «տղերանց» երգը, մի երդ՝ որ մահուան սառսուա էր աղդում . . . տրեան երդերն էին հնչում . . . վերջին կարապի երգն էր երդում — մարդ արարածի անվեհեր հողին . . . երդով մեռնել . . . մահ գիտակցորդն . . . :

Ա՛խ, այդ զիշերը . . . ախ, այդ երդերը . . . :

Հայունի

* * *

(Մ. Բէսկին-ից)

Յաղթութիւնը ամեն անդամ
Կուտի մէջ է ձեռք բերում,
Հաւատաք հրաշքներին,
Հաւատացէք ձեր ոյժերին . . . :

Ազօթքները, աղերսները
Ստրուկների գինքեր են,
Պատերազմի ժամանակը
Աղերսնը ամօթ է . . . :

Պատրաստուեցէք պատերազմել,
Հնահանջէք ոչ մի քայլ,
Ձեր կենդանի պարիսպներին
Թող հանդիպէ թշնամին:

Մահից երբէք չ'վախնաք
Արիւնահեղ տակ կոռին
Հաւատաք հրաշքներին,
Հաւատացէք ձեր ոյժին . . . :


Թարգմ. Արցոնը



Գոռաց փոթորիկ,
Լացէք գուք ամպեր.
Թող երկրի վրայ,
Ջողողան շանթել:
Սուլէ շառաչէ,
Մութ անտարին մէջ.
Ուր քայլամոլոր,
Վհատ գլխիկոր,
Սև ճակատագրին
Ճալածեալ ոլղին.
Տժոյն հերարձակ,
Թափառի մենակ:
Հէգ տարաբաղին,
Խոր գառաշանքին.
Աւելի ազգու,
Զեն քու շանթերը:
Դժբաղդ տարագրին
Փոթորկոտ կեանքին,
Աւելի մթին
Զեն սարսափները:
Գոռալ փոթորիկ՝
Մութ անտարին մէջ,
Սուլէ, շառաչէ.
Դժբաղդի գլխին
Ցողդ արցունք թափի:

Թարգմ. 1907

Չ. Ալեանակ



ՀԵՂԵՂ

(ԾՊԻԼՀԱԳԻՆԻ ՎԵՐԻՑ ՄԻ ՀԱՏՈՒԱԾ)

Իսձ արթնացրեց մի խլացուցիչ աղմուկ, որի ծայնից հինաւուրց տունը հիմքից թնդում էր: Կտուրի աղիւսները աղմուկով և ճալթիւնով վայր էին թափւում, իսկ զբուներն ու լուսամուտները բաց ու խուփ էին լինում այնպիսի ուժգին զղրղիւնով, որ կարծես հարիւրաւոր հրացաններ միասին էին արձակում: Ես վեր թռայ և խկոյն հագնուեցի: Նոյն միջոցին դուռը բացուեց և աւագ-պահապան ծերունի Զիւսմիլիս ներս նայեց: — Արդէն վեր էք կացել, հարցրեց նա: — ի հարկէ այսպիսի մրրիկը արշին անդամ կ'արթնացնի: Երևի նա էլ արթնացել է: Ծերունին չասեց թէ ով էր նա:

— Կամենում եմ զնալ նրա մօտ, ասացի ես:

— Եատ լաւ կանէք, իսկ ես առալժմ կը մնամ: Այստեղ էլ խելացի մարդու կարեք լինի: Այս, իսկ և իսկ հրէշալին եղանակ է: Այսօրուայ մրրիկը աւելի սասափի է, քան ուժ տարի առաջ պատահածը: Այն ժամանակ էլ բանաւրկեալները չէին կամենում ներսում մնալ և քիչ մնաց զործը սպանութեան հասնէր:

Այս կարճատե խօսակցութեան միջոցին սարսափեի քամու ուժգնութիւնը բանի զնում սասափանում էր: Մրրիկի թնդիւնը, ճալթիւնն ու ոռնոցը խեղում, խլացնում էին մեր ծայները. մենք ստիպուած բզաւում էինք, որպէսզի միմեանց լսէնք:

Մի բոպէից յետոյ բանտի բակումն էի: Մե մութը սղի սաւանի նման պատել էր երկիրը, ու ու մոայլ ամպերը ծածկել էին, երկինքն ու սատերը: Մրրիկը բարձր պատերի արանքում ոռնում էր ինչպէս վանդակի մէջ ընկած վալրի գաղան: Զնայած պինդ կաղմուածքիս և ոլժիս, հազիւ կարողանում էի դիմազրել քամուն, որը ինձ քշում էր մի տեղից միւսը: Այսպէս զնում էի թանձր խաւարի և կառուրից թափւող աղիւսների միջով դէպի բանտի վերատեսչի տունը, որի լուսամուտներից նրազի ազօտ լոյսը փալլվրում էր: Նախասենեակում պատահեցի Պառւլալին, որի գունատ գէմքին ընկել էր ձեռքում մոժի լոյսը: Երբ նա ինձ տեսաւ, մէժ-մէժ աչքերը արտասուքով լցուեցին:

— Պառւա, ես զնում եմ հօրդ մօտ: — Այս ինքն էլ գալիս է ալսեղ, պատասխանեց Պառւլան: Վերատեսուչը դուրս եկաւ զրասենեակից: Մեզ տեսնելիս նրա ախուր երեսը պար-

— Գնանք ինձ հետ, Գէորգ, — ասաց նա: — Ես պէտք է աչքի անցնեմ բանափ բոլոր սենեակները: Վերջին օրերում օդը շատ ծանր էր, այդ բանը, երեխ, զգում էին և խենարին բանապարկեալները: Այժմ անշուշտ բանը կը համուկի, զգում էին և առաջնորդի զիշտումի: Յիշտ ես, Պառւա, ոթ տարի առաջ սեպաեմբերի այն սարսափելի զիշտումի: Այն ժամանակ մրրիկը աւելի մեղմ էր, քան այսօր, բայց և այնպէս, մարդիկ զիւահարի նման կատաղել էին:

— Ի՞նչպէս կարելի է այն զարհուրելի զիշտում չիշել: Դրանից յետու էր, որ զուանպէս ատանշում էիր . . . Ահա գալիս է Դորիսը լապաերը ձեռին . . .

Նա վիրյուց աղախնու զողլոշուն ձեռներից մեծ լապաերը և աւելի ինձ: Վերատեսուչը սկրալիր նայեց գատերը. զգեստը կոնկեց և գառնալով ինձ ասաց՝ գնանք, Գէորգ:

Մենք գնացինք: Խաւարի միջից լսում էր մրրիկի վայրինի ոռնոցը, խլացնող հարւածներն ու թնդիւնը: Աչ ձեռքով ես բանել էի լապաերը, իսկ ձախս ձեկնեցի վերատեսչն: Կարծում էի, թէ կարիք կը լինի նրան թեանցուկ տանել, որովհետեւ սասափի հիւանդումինից թուլացել էր: Բայց սխալուած էի. ճիշտ է, առաջին բայլերը թողլ ու անհաստատ էին, բայց շուտով նա ուզգուեց և թողլ իմ թեալ:

— Լսում էք, Գէորգ, ես չսխալուեցի:

Այդ միջոցին մենք բանափ ամենամեծ սենեակի լուսամուտների տակովն էինք անցնում. այնաեղ կային մօտ հարիւր բանապարկեալ: Խաւարի միջից շատ թողլ կերպով նրամարտում էր սպիտակ պատը, իսկ երկաթեալ ցանցերով պատաժ լուսամուտներն համարեաչին նկատում: Քամին խփում էր պատերին և զարհուրելի շրվացով անցնում էր լուսամուտների ցանցերի միջով: Մրրիկից էլ աւելի բարձր ու սարսափելի լսում էր ներսում վակուում մարդկանց ճին ու սղբը: «Կրակ, կրակ», բզաւում էին բանաւրկեալները, «Կրակ բերեք»:

— Շատապի՞ր, Գէորգ, — ասաց վերատեսուչը և այնպիսի արագ բայլերով առաջ գնաց, որ ես զմուարութեամբ էի հետեւում:

Մենք մասնի բաց զոնով լայն նախասենեակը և տեսանք ձերունի աւագ-պահանին, որը տաք-տաք զիմում էր աեսչի և վերակացուների հետ:

Իր տնանէր, որ նա էլ նոյնը կասէ ձեղ: — լսեցինք մենք աղնիւ ծերունու ձայնը — միայն ամենաանմիտ մարդը չի համաձայնի իմ ասածի հետ. վառլցէք լապաերները, սատանան ձեղ տանի:

— Այս, վառլցէք լապաերները, — ասաց վերատեսուչը՝ մօտենալով նրանց: Բոլորը չարգանքով յետ բաշուեցին. միայն աեսուչը անբաւական կերպով վնիթինթաց. — ոչ մի հիմք չկայ բանտի կանոնները խանգարելու, պարօն տեսուչը իբրև բանաւրկեալներն էլ այլ դիտան: Նրանք միայն օգտում են հանգամանքից, ուրիշ ոչինչ:

— Բայց գուցէ և այգակս չէ, պարոն Միւլլեր, — ասաց վերատեսուչը: Չէ որ ես և զուք բանտում չենք նսակը, մեղ հարիւրաւոր ընկերների հետ չեն փակել մթութեան մէջ, և այն էլ այսպիսի զիշերը, երբ կարծես, աշխարհի վերջն է հասել: Երկիւղը նոյնպէս վարակիչ է, ինչպէս անպէներութիւնը: Ես կը ինդրէի ձեղ ինձ հետ միասին անցնել բանաւրկեալների սենեակները: Զիւսմիլիսը և երկու վերակացուները լապաերներով կը գան ձեղ հետ:

Վերատեսուչը ինձ կանչեց. զիտէր, որ ես իրան չեմ թողնիլ: Մենք անցանք նախասենեակով մինչեւ մեծ բաժանմունքը:

— Ճրագ, ճրագ, — կանչում էին այնաեղից վախեցած բանաւրկեալները և բոռնից ները խփում զուանը, կարծես կամենում էին կարել:

— Բաց արէք, — ասաց վերատեսուչը պահապանին:

Սա երկիւղած հայեացը զարծրեց տեսչին, որը լուռ նայում էր դեանին:

— Բաց արէք, — կրկնեց վերատեսուչը:

Պահապանը անփնտական կերպով բանալին անցրեց, գանդաղութեամբ դարձրեց, նոյն կերպ քաշեց փականքներից մէկը, առաջ երկրորդը, բայց հասնելով երրորդին՝ սարսափով լի հայեացը ծգեց վերատեսչի վերայ, որը չկարողացաւ դապել ժպիաբ. — Առաջ դուք աւելի վսահ էիք, Մարտին:

Մարտինը մի ըոսէում յետ քաշեց փականքը: Դուռը լացուեց և մեր աչքերի առաջ ներկալացաւ մի դարհուրելի տեսարան: Երբէք չեմ մոռանալ այդ պատուերը: Բաց արած ծանը կաղնեալ դոնից մի քանի ոսնաչափ հեռու կար մի երկրորդ զուռ՝ երկաթեալ ցանցերից շինած, որը նոյնպէս փակ էր: Կաղնեալ զուռը սովորաբար բաց էին թողնում, որ պահապանները տեսնեն թէ բանտի ներսը ինչ է կատարւում: Բայց այս զիշեր, տեսչի հրամանով, «ապստամբած» մարդկանց որպէս պատիճ, փակել էին: Այժմ նա տեսաւ, թէ իր պատիժը ինչ հետեւանքներ էր ունեցել:

Մեր լապաեների լոյսը ընկաւ ցանցապատ դռան յետեր կաղմւած մի սարսափելի կոյտի վերայ, որը միմեանց վերայ թափւած մարդկանցից էր բաղկացած: Այս ու այն կողմից երեսում էին դէպի վեր ցցուած ոտքեր և ձեռքեր, կամ, երկիւղից ու սարսափից այլանդակւած դէմքեր: Կարծես դոքա մի ընդհանուր գերեզմանի մէջ թափւած զիշերը լինէին: Բայց սոքա զիշերներ չէին, այլ կենդանի մարդիկ, որոնք շարժւում էին, միմեանց հրում, քաշը ըում և սարսափից ու կատաղութիւնից արիւն լցուած աչքերով մեղ էին նայում:

— Մի՞թէ չէք ամաչում, տղալք, — դոչեց վերատեսուչը և նրա թող ծայնը այնպէս բարձր թնդաց, որ խլացրեց աղմուկը: — Ի զուր աեղը զուր ձեղ վնասում էք մի ինչ որ երկալական վասնդից աղտառելու համար, մի վասնդից, որը խկապէս զոյութիւն չունի: Մութ աեղում նստած՝ երեխ ենթազերէ էք, թէ սարսափելի կորուս է սպառնում ձեղ:

— Վերատեսչի ներկայութիւնը արգեօք աղդեց բանատրկեալների վերայ, թէ նրա ծայնը, որ այնպէս վսահ էր հնչում, կամ գուցէ լապաերների լոյսը, որ անհետացրեց շրջապատող խաւարը, յամենան դէպս կոյտը ցրուեց, ձեռքերը իշան, ոտքերը կանգնեցին յատակի վերայ, իսկ աչքերից անհետացաւ ցնորուած արտախառութիւնը: Բանատրկեալներից մի քանիսը ամաչեցին և աչքերը խոնարհցրին:

— Ճանապարհ տուեք, տղալք, ասաց վերատեսուչը, ևս չեմ կարող ներս մտնել:

— Բանատրկեալները յետ քաշուեցին, ցանցապատ զուռը բացին և վերատեսուչը ներս մտաւ: Մենք հետեւեցինք նրան:

— Տեսնում էք, տղալք, որքան թեթեամբա էք զուր, շարունակից նա ընկերական եղանակով. զուր բոլորդ էլ միայն շապիկով էք կանդնել և զողում, մրսում էք: Պառվեցէք, պառկեցէք տեղերդ կամ հագնուեցէք: Թող ձեր սենեակում լապաերները վառեն և այն ժամանակ ձեղանցից իւրաքանչւրը կը աեսնի, թէ իր հարեանը որպիս վախկուն է և ինչպէս ինքը քաշասիրա է:

Բանատրկեալները նայեցին միմեանց և շատերի դեռ ևս սարսափած դէմքերին երեւաց բարի ժպիաբ, իսկ վերջին շարքերում նոյն իսկ ժիմապեցին:

— Այսպէս, — ասաց վերատեսուչը, ժիմապեցէք, տղալք, և ձեր մտքովը թող ոչ վաս քան չանցնի: Դէք, բարի զիշեր, ևս զեռ միւսների մօս էլ պէտք է զնամ:

Մինչդեռ նա խօսում էր, վերակացուները վառեցին առաստաղից բաց արած չորս մեծ լապաերը և ահապէն սենեակը լուսաւորուեց: Դրսում նոյն սաստիութեամբ ոռնում

և աղմիում էր մըրիկը, բայց այսաեղ ամեն ինչ հանգարառուեց, շնորհիւ մի քանի բարի խօսքերի, որ լնկան ախուր և մոալ մարդկանց սրտերը:

Մենք գնանք միւսների մօս, ասաց վերատեսուչը:

Մենք առաջ գնացինք մէծ նախասենեակով. բայց մեր բայլերը անլուկի էին գրսի մըրկի պատճառառով: Ամեն աեղ, ուր որ մտնում էինք, մեր աչքերին ներկայանում էր նոյն երկանք մէտ առաջանք մէկ սարսափելի ահն ու երկիւղը, միւս աեղում էին վայրագ ու զայրութով լի պահանջներ, մի երրորդ բաժանմանքում աղերսում ու խնդրում էին լուսաւորել սենեակը:

Վերատեսչին յաջողուում էր ամեն աեղ երկիւղից յնորւած բանատրկեալներին համոզել: Միան մի բաժանմունքում սոքս չէին կամենում, կամ չէին կարող հանգստանալ: Այդ սենեակը գանցում էր բանատրկեալներն անկամութեամբ մըրիկը աւելի սաստիկ էր փականի սարսափելի եղանակով, որտեղ մըրիկը անդամանական մըրիկից լի պահանջներ, մի երրորդ բաժանմանքում սոքս էր այնպիսի սարսափելի եղանակով, որ ամենաքաշ մարդին անդաման յացում էր բայլերից: Նոյն վայրէկանին կառուրից աղմուկով վայր զլորեց խողափակը: Վերատեսչին աղմուկով վայր զլորեց խողափակը ու լուսամոււներին, աւելացրեց տանաց այն էլ խլացնող աղմուկն ու սարսափիք: Բանատրկեալները գուրս թողնել էր իրենց: Նոքա ինչ զնով էլ որ լինի զուր կը զան և չեն թուլ տալ, որ իրենց կենագանի թաղին:

— Հանգստացէք, հանգստացէք, համոզում էր վերատեսուչը: Այսաեղ զուր աւելի սպահով էք, բան մի ուրիշ տեղում: Այս մասը բանատրկեալների շինութիւնն է է:

— Ի հարկէ, հէշտ է այդպէս խօսել, վրնթփրնթացէք աղմուկով անկողնում:

— Տուր ինձ քո ներքնակը, սիրելիս, ասաց վերատեսուչը:

Բանատրկեալը գարմացած նայեց:

— Քո ներքնակը, սիրելիս, կրկնեց վերատեսուչը: Ես կամենում եմ այս զիշեր վորդ արգեօթ նա չոր է և իսկապէս շատ վաս է: այսաեղ քնելլ:

— Տուր ինձ քո սիրելիս, կրկնեց վերատեսուչը:

Սպամուկն ու ձայները հանգարատեցին. տիրեց խորին լուսութիւն. բոլորը շփոթուուծ միմեանց էին նայում, չհասկանալով լուրջ է վերատեսչի տասձը թէ հանար: Բայց նա տեղից չէր շարժւում: Լուռ ու մատախոչ կանգնած էր նա զլուխը քաշ: Ոչ ոք մեղանից չէր համարձակուում խօսել նրա հետ: Բոլորի հայեացը յառած էր յանդուզն բանատրկեալին, որը կանդնած էր մահւան գատապարտաւածի նման: Նորա յամառութիւնը յաղթւած էր. կամաց գնաց նա, վերցրեց իր ներքնակը և բերեց վերատեսչն:

— Դի՛ր այսաեղ, ես յօգնել եմ. շնորհակալ եմ:

Բանատրկեալը փուց ներքնակը յատակին և վերատեսուչը պատկեց:

— Դէք, տղալք, զուր էլ պառկեցէք, ասաց վերատեսուչը, զնացէք, խնդրեմ, հիւանդանոց և իմացէք, արգեօթ ես այնաեղ պէտք չեմ. իսկ զուր, ֆէորդ, մնացէք ինձ մօս:

— Տեսուց և վերակացուները գնացին: Մենք մնացինք մէնակ լիսուն բանատրկեալների մէջ, որոնք ամենակատաւածի նման: Նորա յամառութիւնը յաղթւած էր. կամաց գնաց նա, վերցրեց իր ներքնակը և բերեց վերատեսչն: Դի՛ր այսաեղ, ես յօգնել եմ. շնորհակալ եմ:

շարժ պառկած էր: Նա քնած էր կամ քնած էր ձեանում, բայց ինձ թւում էր, որ երբեմն երբեմն նա ամբողջ մարմնով դողում էր: Այստեղ դալիս անծրեր մեղ թրչեց. այժմ նրա վերալ վերմակ չկար, այն ինչ նա ծանր հիւանդութիւնից յետով դեռ չէր կազդուրուել ինչով կը վերջանայ այս ամենը, երիւղով մասնում էի ես:

Յանկարծ բանտարկեալներից մէկը բարձրացաւ թախտի վերալից։ Անլոելի քայլեռով ստարորիկ ծօտեցաւ ինձ և շընչաց. «Նրա համար լաւ չէ այստեղ պառկել, կը մէռնի»։ — Ի՞նչ կարող ենք անել, ասացի ես:

Նա պէտք է տուն դնայ, շրջնչաց մի ուրիշը, որ նոյնպէս մօտեցել կը լինծ. Նա կարիք չունի այսակեղ պառկելու և դողալու մի անպիտանի պատճուռով։ Մենք չենք կամենում այդ մեղքի տակ լնինել։

Ոչ, մենք չենք կարող ալիւ մեղքի տակ ընկնել — շրջնչացին ամեն կողմից բանտարկեալները և շրջապատեցին ինձ: Սրանք էլ ինձ նման տանչում էին միեւնոյն մաքով: Նորացանկանում էին մի կերպ ուղղել սխալը, բայց չփխաէին ինչպէս սկսեն: Վերշապէս մէկը առաջարկեց — գանդը ահերթ ինքը անծամբ պէտք է գնոյ վերատեսչի մօտ և խնդրէ նրան առն դնալ:

Այս, այս, անսպասեառ, ուր է նա . . . ահա այստեղ է . . . բերեք նրան:

Նորա բոլորը վազեցին դէպի անկիւնը։ Տասը տասներկու ուժեղ բռունքքներ սախ-
պէցին նրան բարձրանալ և բարշ աւին վերահսչի մօտ, որը այդ միջոցին զարթնեց և զլուխը
բարձրացրեց իր չոր անկողնուց։ Լապահի լայպ բնիկել էր նրա գունատ դէմքին. մէծ - մէծ
աչքերը փալում էին և բաղդաւոր ժայիտ խաղում էր շրթունքների վերաւ։

— Ծնորհակալ եմ, շնորհակալ եմ, ասաց նա: Իմ կեանքը, որը դուք այդպէս բարեսրառութեամբ խնայում էք, ձեզ պէտք է նուիրեմ: Իսկ այժմ խնդրում եմ ձեզանից նայել այս երիտասարդի վերայ, ինչպէս ինձ վերայ. այն ամենը, ինչ որ սրա համար անէք, միենոյն է թէ ինձ համար էք արել:

Երիտասարդ բանաբարկեալլը ծնկաչոք ընկաւ նրա առաջ, իսկ նու սիրալիր կերպով ձեռքը զրեց նրա զլխին։ Երբ մենք մօաւեցանք դուաճը, ևս յետ նայեցի։ բանաբարկեալներից ոչ մէկը աեղից չէր շարժւում. ամենքը նայում էին այն հրաշալի մարդուն, որը յենած թէերին, դուրս էր գնում իրենց մօալից. շատերի աչքում փայլում էին արտասուրի կաթիներ։

Ժամը երկուսին մենք վերադարձանք տուն։ Պառվան զեռ քնած չէր. լսելով զանդի ձայնը իսկոյն դուրս եկաւ նախասենեակ։ Հայրը միայն ժպատց քնքշաբար շոյեց նրա վլուխը և զնաց իր սենեակը. ևս հետեւեցի նրան։ Խօսելու ոյժ չունէր. դեմքի զոյնը մեռելացին էր, իսկ ներս լնկած այտերի վերայ այրում էին երկու կարմիր զբոշմներ։ Նա ձեռքով նշան արեց, որ օգնեմ իրեն պառկելու, յետոյ հայեացը զնորհակալութիւն յայտնեց և ուժապառ փակեց աչքերը։

Ես նստեցի անկողնու վերայ և աչքերս չեմ հեռացնում նրա գունաս դէմքից, վեհ հանգստութիւն էր զրոշմւած այնաեղ. կարմրութիւնը անցել էր արդէն, նա այնպէս անշարժ պարկած էր, կարծես հանգուցեալ լինէր: Լուս և հանդիսաւոր էին անցնում զիշեր-ւայ ժամերը այդ սենեակում: Երբէք չեմ աեսել կեանքումս այնպիսի մէծ հակասութիւն, ինչպիսին աիրում էր այս քնած մարդու զէմքի խաղակութեան և զրսում կատաղած ու փրփրող մըրիկի մէջ: Նա իրաւունք ունէր քնելու: Դորա հոգին այնպիսի երանելի բար-

Ճրութեան վերայ էր, որ ոչ մի երկրալին մըրիկ չէր կարող վրդովկլ նրան։ Մի քանի ժամ արթուն մնացի. իսկ յետոյ, ինչպէս երեսում է նիրհել էի, որովհետեւ երբ կրկին արթնացայ, արդէն լուսամտից նշմարւում էր լոյսը, վերատեսուչը դեռ նոյն զիբքով պառկած էր։ Ես կամաց վեր կացայ և գուրս եկայ սենեակից։ Թարմ օդի կարիք էի դղում, որ մի կերպ թեթևադնեմ սրտիս ծանր հոգար։

Իոյսն այնքան խաւար էր, որ ես կարծում էի, թէ նոր է լուսացել և շատ զար-
մացայ, երբ նախասենհակում աեսայ, որ ժամը 8-ն է արդէն։ Դրսում սկ սզի բող էր
սպասել երկիրը. ոչ լոյս էր, ոչ մուժ։ Մըրիկը գեռ շարունակում էր։ Քամին այնպէս ուժ-
դին էր փչում, որ պատշգամբից իշնելիս քիչ էր մնում ցած դլորեկի, հաղիւ-հաղ անցայ
պարտէզ, որը քամու աւերիչ ուժին ենթարկուած՝ մի տիսուր տեսարան էր ներկայացնում
Մատաղ ծառերը ցիր ու ցան եղած, ծաղկանոցն ու ծաղիկները քար ու քանդ եղած,
մարդու վերայ ճնշող տպաւորութիւն են թողնում։ Միայն ծերունի հսկայ սօսիները ան-
յաղթ կանգնել էին կատաղի մըրիկի դէմ և շփոթուած ճոճում էին իրենց փառայեղ զլուխ-
ները։ Ես մտայ բարձրաւանդակի վերայ շմնուած հովանոցը, որտեղից բացւում էր ամենա-
լայն տեսարանը զէպի ծովը։ Սարսափեկի՛ պատկեր։ Արձային երկնքի և ծովի մէջ տեղը
պառյա անող ծկնկուլներն իրենց աղիողորմ ծրվիրվացով մարդու խիզն էին տան-
չում։ Իմ զիմաց գանւող բարձր ամբարտակի (baστίον) վերայ դալար խոտք դալկացած
զետնին էր փոռուել, իսկ աշ կողմում ծովափի երկար պատի վերայ երբեմն երեւում էին սպիտակ փայլուն շերտեր։ Սկզբում չէի որոշում զրանց ինչ լինելը։ Միթէ պատնշի ա-
տամնաւոր հայրերն էին։ Դա անկարելի բան էր թւում ինձ։ Պատը տասներկու ոտնաչափ
բարձրութիւն ունէր, իսկ նրա առաջ մինչև ծովը գտնում էր աւազու լայն տարածու-
թիւն, որի վերայ շմնուած էր լրդարանը։ Ծովը շատ հեռու էր պատից։ Իսկ եթէ այդ
փայլուն շերտերը կատաղի ալիքներն էին, ապա ուրեմն, ծովն այնքան էր բարձրացել, որ
հասնելով պատին ալիքներն երբեմնապէս անցնում էին նրա վերայով։ Ես վերադաշտաց
և ժամը 12-ին գնացի վերատեսչի մօտ։ Նա մենակ չէր. բժիշկը մօտն էր։ Նոյն ըոպէին
իմ լեռեից դուռը բացւեց և պահապանը սաստիկ ալլալուած ներս մտաւ։

« Ի՞նչ կամ, հարսորեց վերատեսուչը »

— Այնտեղ ահապին բազմութիւն է հաւաքուել, պ. վերտանեսուչ

« *Люблю* »,

— ԲԵՐԿԻ մԵԾ ՊԱՆԵՐԻ մօտ:

« Այդ ի՞նչ մարդիկ են »:

— Բոլորն համարեած ծովափնեալ փողոցից են, նոքա ասում են թէ բոլորը կը խեղդ-
ւին . . . և որովհետեւ մեր կողմը աւելի բարձր է . . .

Պահապանը խօսրը չվերցացրած՝ վերատեսուչը անդից բարձրացաւ և շտապով դուրս եկաւ բանտի բազքը։ Մենք հետեւեցինք նրանք նա զուրս եկաւ առանց գլխարկի, թեթև հաղուստով, իսկ զրուժը աղմկում էր մրրիկը և յուրա քամին խազում էր նրա մաղերի և երկար բեխերի հետ։ Մենք մօտեցանք զռներին։ Դռնապանը ահաճութեամբ բաց արեց փականքները։ Այս սրաամձլիկ տեսարանը ես երբեք չեմ մօռանալ։ Դռների մօտ հաւաքւել էին մօտ 50-ի չափ մարդիկ, մեծ մասամբ կանալը, բայց կային և աղամարդիկ թէ; Ճեր և թէ երիտասարդ, նաև մեծ ու փոքր երեխաններ։ Այստեղ եկողներից իւրաքանչիւրը բերել էր հետք մի որեւէ լան, ինչ որ ծեռքն էր ընկել։ Ես նկատեցի մի կին, որ ուսերին զբած լերել էր մի ժանր տաշա և վայր չէր զեռում, կարծես վախենում էր թէ նա կը փշրւի։ Մի տղամարդ մեծ զգուշութեամբ բերում էր մի փոքրիկ, դատարկ վանդակ։ Երբ

զո՞ները բացուեցին, ամբոխը խուռան կերպով ներս թափւեց բազք։ Դռնապահը կամքենում էր արգելել, բայց վերտառեսուչը կանչնեցրեց նրան։

— Թող, ներս թող ամենքին —

Մէնք մի կողմ բաշուեցինք և ճանապարհ տինք հեղեղի նման ներս խռովոց

— Կանդնեղէր — ծալն տուեր միրատէսուս:

Մարտիկ կանո առանց:

— Ներս թողէք կանանց և երեխաներին, տաաց պահապաններին, նոյնպէս ծերունիներին ու հիւանդներին։ Տղամարդիկ թող միայն կարճ ժամանակով ներս գան տաքանալու։ Նորա ինձ հարկաւոր են։ աւսակսի ժամանակ առաջնորդ է։

— այ զատով չարուսակ սերս էրս դալիս սոր սարգիկ:
 — Ներս թողէք, թողէք բոլորին, պատուիրեց վերատեսուչը:
 Մի երիտասարդ կին փոքրիկ երեխան ձեռին մօտեցաւ նրան և բգաւեց — աւէք
 ինձ իմ ամուսնուն, ինչու եք բանտարկել նրան, ես անկարող եմ մէնակ այս լոլոր չա-
 րահճիներին քոյրշ տալ այստեղ: Եթէ այժմ միւսներիս կենդանի չգտնեմ, իւղղեցէք և
 այս վերջինին նա կամենում էր աղախին վայր դնել, բայց տեսնելով բժշկին, ձղեց ման-
 կանը նրա թներին և նորից վաղեց դէպի դուռը:

Բժիշկը ղարձացած նայեց նրան։ Յանկարծ նրա կոպիտ դէմքի վերայ կարծես կայ-
ման մի միտք սլացաւ և նա սեղմէլով լացող մանկան իր կրծքին ներս փաղեց վե-
հ ապառէռ կառապէռ։

— Դու այստեղ կաց Դէորդ և խօսիր մարդկանց հետ: Տառը բողէից յետով ես կը մերապառնամ:

Զարմացած նայում էի նրա յետեկց։ Այս ի՞նչ է նշանակում, առաջին անգամ նա ինձ դու ասաց, բնազգմամբ զգում էի, որ այդ արեց նա առանց յետին մտքերի, և սխալ էլ չէր, որովհետեւ նա ուղիղ ինձ էր նայում։ Ես հասկացայ, որ այնպիսի հանդիսաւոր ըովէներին վերատեսչի նման մարդու աչքում պէտք է վերանային բոլոր մանր պատճենները, որոնք գոյութիւն ունեին մարդկանց յարաբերութիւնների մէջ։ Տասկացայ, թէ նա ինչ էր որոշել, հասկացայ, որ նա վճռելով կոռւել կեանքի ու մահուան դէմ, զնաց հրաժեշտ տալու իւրաքիններին։ Ես ցնցուեցի, լարձրացրի զլուխս։

— Սիրելի բարեկամներ. ձախ տուի, մի՛ վախենաք, նա ձեզ կ'օդնէ, եթէ միայն, մարզկացին ոչժից վեր չէ: Ամբոխը շրջապատեց ինձ. նորա պատմում էին վերահաս սարսափելի վտանգի մասին, պատմում էին, որ կես զիշերից սկսած չուրը իւրաքանչիւր ժամում մի ոտնաչափ բարձրանում է: Այժմ արդէն 12 ժամ անցել է, այն ինչ պատի բարդութիւնը միայն 13 - 14 ոտնաչափ է և եթէ պատը ծածկուի, ծովին մօտ դանւող միոցների բնակիչները ամբողջապէս կոս իւրաքէն:

— Ավասու, որ երկու աղանձը ինձ մօտ չեն և անկարող են օդնել մեղ, նկատենի ծիրունի:

— **Բայլը նա կ'օբհէ** — ասած է իս:

Մերունին կասկածոտ հայեացըով նոյնեց ինձի ձիշտ է, նու բարի պարոն է, այդ իւրաքանչիւր երեխալին անդամ յայտնի է, բայց ի՞նչ կարող է անել.

Այս միջոցին վերատեսուչը դուրս եկաւ տաճից: Նոյն ըոսէին բանտի երեք գռներով դուրս եկան բանտարկեալները աշխատանքի՝ մոխրազոյն շապիկները հաղած: Նորաթւով չորս հարիւր հողի էին, մեծ մասամբ ուժեղ և առողջ տղամարդիկ: Զեռքերում ունէին բահեր, թիեր, կացիններ, պարաններ և առհասարակ այն ամենը, ինչ որ կարելի էր դանել բանտում: Բանտարկեալների առաջից գնում էին վերակացուները: Կանդնեցէք, ուզգւեցէք, ծայն տւին նորա և բանտարկեալները երեք կարգ հերթով շարւեցին:

— Մօռեցէք ինձ, տղայք, ասայ վերատեսուչը

Նորա մօտեցան: Նա մի քանի ըսպէ դլուխը քարշ արած, լուռ կանգնած էր, ապա ուղղւեց, աչքերը փայլեցին և նա խօսեց այնպիսի բարձր ձայնով որ նրա նման թոյլ կուրծը ունեցողից երեկք չէր կարելի սպասել:

— Տղակը, մարդուս կեանքի մէջ լինում են բոպէներ, երբ նա ցանկանում է նոյն խոկ մահուան գնով փրկւել: Այսօր մեղ մի մեծ բարդաւորութիւն է բաժին ընկել: Զեղանից ամեն մէկը, ով էլ որ լինի, ինչ էլ որ նա արած լինի, կարող է այդ բոպէների շնորհիւ փրկւել կարող է բոլոր լաւ մարդկանց աչքու մ և ինքն իր խղճի առաջ վերանորոգուել: Դուք զիտեք մեղանից ինչ են սպասում. զուք պէտք է վճռեք ձեղ զոհել, որպէսզի աղատէք հազարաւոր մարդկանց կեանքը: Ես ձեղ ոչինչ չեմ խոստանում — չեմ ասում, որ այդ մեծ գործի համար ձեղ բանտից կ'աղատեն: Ոչ, մինչև անդամ վազօրօք յայտնում եմ, որ զուք կրկին կը վերադառնաք այստեղ առանց պարգևների և աղատութեան, ծանր դռները նորից կը փակուեն ձեր յետեից: Դուք, բացի ձեր վերատեսչի շնորհակալութիւնից, ոչինչ չեք ստանալ. կ'խմէք միայն մի բաժակ թունդ օդի և կ'ունենաք ընդ միշտ այն փափուկ բարձից, որ ունենում է ամեն մի աղնիւ մարդ: Ցանկանում էք արդեօք այս պայմաններով հետեւ ձեր վերատեսչին: Ով որ ցա՞նկանում է, թող ձեռք բարձրացնէ և այս կանչել:

Զորս հարիւր ձեռք բարձրացան և չորս հարիւր կրծքից դուքս թռաւ բարձր «այս» որը մըրիկին անդամ խլացրեց։ Մի բոպէում վերատեսչի կարգադրութեածք, բանտարկեալներն, որոնց միացան նաև քողաքից եկած տղամարդիկ, երեք մասի բաժանուեցին։ Մի մասը իր հսկողութեան տակ առաւ Զիւսմիլիխը, երկրորդը ես. իսկ երրորդը նախկին նաև շինող, այժմ բանտարկեալ Մատէսը, որը մի եռանդուն խելացի ու քաջ տղամարդ էր։ Վերակացւներն նոյնպէս մասն շարքերի մէջ։

— Այսօր, տղայք, մենք բոլորս հաւասար ենք. ասաց վերատեսությ և ամեն մարդ ինքն իր վերայ պիտի հսկէ:

Այս կարգով զուրս եկանք բանափ դռներից. մենք պէտք է անցնէինք նեղ փողոցով, ուր բացւում էր զլխաւոր զուրպ: Փողոցը երկար չէր. մենք շուտով հասանք նրա ծայրը, բայց այստեղ պատճեցինք մի այնպիսի արգելքի, որը ամեն բանից զօրեղ ապացուցեց մեղ ծրբիկի սարսափելի ոյժը: Հին գոների փոխարէն մեր առաջ երկում էր մի նեղ անցք, որի միջով անցնող քամու ոյժը այնքան սասարկ էր, որ աւելի հեշտ կը լինէր փշրել երկաթապատ կաղնեալ զուրը, քան այդ անցքով անցնել միւս կողմբ: Քամին, ինչպէս ահաւ-լի հսկալ, յետ էր շղթառում մեղանից իւրաքանչիւրին, ով համարձակւում էր նրա զէմ կոռուել: Երբ մենք բոլորս ձեռք ձեռքի տուինք, միայն այն ժամանակ մեղ լաշողուեց միա-ցեալ ուժով անցնել նեղ անցքով: Այնուհետեւ մենք արագ առաջ անցանք և հասանք այն տեղ, ուր հարկաւոր էր մեր օդնութիւնը: Սա նոյն երկար պատն էր, որը սկսւում էր բարձրաւանդակի մօտից: Պատն երկարութիւնը 500 քայլ էր, որից յետոյ սկսւում էր նա-ւահանդիսար, ծովի մէջ խոր մտած ամբարտակով: Մի հայեացք ձգելով հասկացայ, թէ ին-չու այդ տեղը այդքան վահնդաւոր էր մըրբիկի ժամանակ: Զուրը բարձրանալով և լցուե-լով պատի և նաւահանդասի բարձր ամբարտակիների մէջ տեղը, աշխատում էր ճանապարհ

բաց անել և ուժգին ճնշում էր պատր: Եթէ չուրը մի փոքրիկ ճեղք անդամ բաց աներ պատի մէջ, բաղաբի ներսի մասը ամբողջապէս կը կորչէր: Մօտակայ փողոյների աների բարձրութիւնը հաղիւ պատճեցի բարձրութեանն էր հասնում: Քառորդ բովկն բաւական էր ինձ պարզելու գործի զրութիւնը. աւելի ժամանակ չկար. Խելքս և սիրոս ընկնուած էին ներկայ վատանդի մեծութիւնից. որի դէմ պէտք է կուէինք: Ամբողջ կեանքս ծովափնեաց երկրումն եմ անցկացրել, ամբողջ օրերով ծովի վերաց ձանապարհորդել և միշտ մէջ ուշալրութեամբ հետեւել եմ ամեն մի սրբկի: Այս ամենը ինձ իրաւունք էր տալիս կարծելու, որ ես շատ լաւ եմ ճանաչում ծովը: Բայց սխալուած էի, ես նրան մինչև այժմ բոլորովին չեի ճանաչել, ինչպէս չե կարելի ճանաչել ոռումբը, մինչեւ որ նա չ'պայթի և չ'ոչնչացնի մարդկանց: Երեակացութեանս մէջ անդամ չեի կարող պատկերացնել այն, ինչ որ այժմ տեսնուում էի: Իմ առաջ ծով չեր, որ ահազին ալիքներն աւելի կամ պակաս ուժով խփում էին ափերին, այլ սա մի հրեշ էր, հրեշների մի ահազին վոհմակ էր որ ոռնոցով ու գոռում գոչումով զրոհ էին տալիս, բաց անելով կատաղութիւնից փրփրած ըերանները: Սա մի քաօս էր, որ պատրաստ էր կլանել ամեն մի կենդանութիւն, կարծեմ մէկը չկար, որ նոյնը զղգար: Կարծես այս բովկին էլ կենդանի կերպով տեսնում եմ չըրս հարիւրից աւելի բաղմութիւն, գունատ գէմքերով, սարսափահար հայեացըները ծղած մերթ դէպի այլ հրեշաւոր քաօսը, մերթ հարեանին և մերթ այն մարդուն, որը բերել էր նոցա այստեղ և միայն նա կարող էր բացատրել, թէ ի՞նչ պէտք է անել:

Հըտշալիք՝ մարդկան կամ անցեալը, ևս սիրով մտարերում եմ նրան, պատկերացնում եմ զանազան դիրքերում և գէպքերում միշտ մեծ, միշտ վսեմ և զեղեցիկ։ Բայց երբէք նրա մէջ այնքան վեհութիւն և հերոսութիւն չէի նկատել որբան այն բողեին, երբ նա կանգնել էր պատճէշի վերայ, ձեռքը յենած գրօշակի փայտին։ Հերոսութիւն կար նրա կաղճուածքի մէջ, հերոսութիւն նրա կրակու հայեացքի, հերոսութիւն նրա ձայնի մէջ, որով նա կարծ բայց հասկունալի պատերներ էր տալիս։ Ոմանց ուղարկում էր մօտակայ փողոյնէրից տակառներ և արկղներ բերելու, ոմանց բարձրաւանդակի վերայից հող կը բելու, շատերին սղոցներով ու կացիներով անտառ էր վաղեցնում մատաղ ժառներ կարատելու, մնացածներին ուղարկեց մօտակայ նաւահանդիսար այնտեղի հիւսներին կանչելու, բայց դրանից պատուիրեց հետները բերեն 10-12 հաստ գերաններ, որոնք շատ կարեռ էին և անպատճառ, նոյն իսկ ուժով պիտի ձեռք բերէին։ Կէս ժամ չանցած ամեն տեղ եռաց աշխատանքը։ Այսաեղ կողովներից հող էին թափում, ջրի բաց արած նեղքերը փակում այնտեղ սիւներ էին խփում և մատաղ ծիւղերով պատճէշ հիւսում, մի կողմում գերաններից պատ էին շարում։ ամենքը աշխատում էին, փարում, քաշում, կացնով խփում, սայշինքոցութեամբ, որ առանց արտասուքի չեմ կարող մտաքերել Զէ որ այս մարզիկ դնում, իսկ նոյն երեկոյեան, երբ մըրիկը կասաղի ուժով խփում էր բանտի պատերին, վախենալոցութեամբ, որ առանց արտասուքի չեմ կարող մտաքերել Զէ որ այս մարզիկ դնում, իսկ նոյն երեկոյեան, երբ մըրիկը կասաղի ուժով խփում էր բանտի պատերին, սրանք էին, որ այնպիսի սարսափելի ահ ու դողի մէջ էին բնկել ու փաքր երեխայի նման սպաննել, թալաններ, այբել, աւերել, որքան կամենում են, ովք կարող է նոյա արդելեր։ Այն տարածները, ովք կարող էր սախիպել նոյա այդ անելու։ Մըրիկը նոյնքան կասաղի էր, որ ակնչայտնի մահացու վտանգի առաջ, ինչու կարիք եղաւ բռնել նաւի ահաղին կալմը որը անցաղը ուժով պիտի խփուեր պատին ինչու։

Բայց ով որ տեսնէր, թէ ինչպէս էին աշխատում բանտարկեալները, ինչպէս նորա ոչ մի ոյժ չխնայելով կատարում էին այս ժանր ու հսկայական գործը, անշուշտ կը զարմանար: Այս տեսնում էին ծովափնեայ փողոցների աղքատ բնակիչները, որոնցից տղամարդիկ նոյնպէս աշխատում էին: Կանալք ու երեխայք եկել էին այսաեղ և պատի մօտ կանդնած՝ երկիւղով ու զարձանքով նայում էին բանտարկեալներին: Խսկ առաջ ինչպէս վախենում էին նրանցից, ինչպիսի անհանդսութեամբ նայում էին նրանց յետեից, երբ ամենօրեայ աշխատանքից յետով փոքրիկ խմբերով վերագառնում էին նոքա բանտ: Այժմ չէին վախենում, այլ ազօթում էին նրանց համար և օրհնում նոցա կերածն ու խմածը, որ իրենք էին բերել նոցա համար, Ոչ, նրանք չէին վախենում չորս հարիւր բանտարկեալներից. ընդհակառակը աւելի դոհ կը լինէին, եթէ թիւը կը կնապատկւէր:

Գիշերուան մօտ, մըրիկը, կարծես վերջին վճռական կռիւ մղելու պատրաստուելով կրկնապատկեց իւր կատաղութիւնը: Ես սարսափով մտածում էի, որ չենք կարողանալ զիմազրել նրան, որ այսքան ժամուայ ծանր աշխատանքը իդուր պիտի անցնի: Ահա եղի ալիքները ալլես յետ չեն փախչում, այլ անցնելով պատի վերաբով լցուում էին փողոցն:

Սարստիած նիւ արժակելով յետ փախուտ պատի մօտ հաւաքուած ամբոխը, Մենք, վերևում աշխատողներս, չաղիւ կարողացանք կանգնած տեղերում մնալ: Ես աեսայ, թէ ինչպէս ամենավստահ բանարկեալներն անդամ, որոնք ամեն մի վանդ ծաղրում էին, այժմ դռնատուեցին և զլուխները շարժելով ասում էին -- սա անկարելի է, այստեղ ոչինչ չի կարելի անել:

Դրաման իր գագաթնակէտին էր հասնում — մօտենում էր ամենաըսափելի վայր-կեանք, պէտք է սկսենք ամենագդուար զործը: Փոքրիկ հոլլանդական նաւը, որը կանգնած էր նաւակայանի մօտ, պոկ եկաւ խարիսխից: Կատաղի ալիքները խլեցին նրան և ինչպէս մի փոքրիկ կողնու կեզե այս ու այն կողմն էին շպլատում նրան: Նա, մերթ բարձրանալով ալիքների լեռնաձև գագաթներին, մերթ անդունդ իջնելով, մօտենում էր պատին: Մենք տեսանք տռագասաներից կախ ընկած մարդկանց յուսահատ ցնցումները, որոնց ողբալի նիւր մարդու սիրտ էր կտրատում:

Միթէ ոչինչ չենք կարող նբանց համար անել, հարցրի ևս վերատեսչն:

Նա ախուր զլուխը շարժեց: Թերեւս մի փորձ էլ հնարաւոր լինի անել, ասաց նա, որ հետեւալ սլիքները բարձրացնեն նաւը, մենք պէտք է աշխատենք բռնել նրան, որ հետեւալ ո նորից յեւ չանի: Եթէ այդ ցաջողուի, նոքա կը կորչեն, մենք էլ հետեւրը: Նաւը իլով պատին, բաց կ'անէ մի այնպիսի ճեղքուածք, որ անկարելի լինի փակել: Գէորգ, այլիր ամենահաստ սիւներ խփել և ամենահաստ պարանները կապել: Թէև յոյսը մեծ այցիր ամենահաստ սիւներ խփել և ամենահաստ պարանները կապել: Թէև յոյսը մեծ այց պէտք է փորձենք: Գնանը: Մենք շտապով մօտեցանք այն տեղին, ուր մեր կար- լ պէտք է զուրս ընկներ նաւը: Մարդիկ, որոնք ամրացն եմ էին պատր, հետացել աշխատելով աղատուել վտանգից, իսկ երբ տեսան, որ վերատեսուը ինքը կացին առա- ս, նորից բոլորը միացան, և մի տեսակ խելակորոյս վստահութեամբ զործի կպան, մի իսի յանդուղն գործի, որի գէմ մինչեւ այժմ կատարած մանկական խաղ կարելի էր որել: Եւ այն, ինչ որ անշնարին էր համարւում, իրագործուեց: Տսկայական ալիքը շալակած թռաւ գէպի մեզ ջուրը հեղեղեց ամենքիս, բայց մենք խփած սիւներից բռնած կանգնել էինք: Երբ զարհուրելի բոպէն անցաւ և մենք նորից իրար տեսանք, արգէն մեր ոտքերի առաջն էր: Վրայ հասանք խսկոյն. հարիւրաւոր ձեռքեր սկսեցին անները կաղել կայմերին, իսկ միւսները շտապով արձակում էին առաջասաններից կախ ձ սարսափահար մարդկանց: Այս ամենը մենք վերջացրինք մինչեւ երկրորդ ալիքի վրայ ելլը: Կը խլէ արգեօք նա մեր որսը: Աչա և նա. վրայ հասաւ, յաղթւեց. ապա երկ-

բորդը, Երբորդը: Պարանները զիմացան, իսկ ալիքների ոչմը հետղէեաէ թուլացաւ. չորրորդը հաղեւ պատի ծալիքն հասաւ, հինգերրորդը տևելի ցածրում փշրւեց: Վերջապէս այսքան երկար ժամանակ տեղով խլացուցիչ աղմուկը յանկարծակի հանդարտւեց և լոռութիւն տիրեց: Նաւահանդստում կանդնած նաւերի զրօշակները, որ շեղւել էին զէպի արեւելը, միանդամից լնկան և ապա դարձան դէպի արևմուտք: Մըրիկը վերջացաւ, բամին փոխուեց. յաղթութիւնը մերն էր:


Յաղթութիւնը մեր կողմն էր, մի րոպէում ամենը այդ հասկացան: Սղը թնդաց բարձրաձայն կեցեներով: Բանտարկեալները, այդ խստասիրա մարզիկ, փաթաթուում և սեղմում էին միմէսնց ձեռքերը: Կեցեց, կրկն կեցեց:

Յաղթութիւնը մեր կողմն էր, բայց մենք շատ թունդ դնով դնեցինք նրան: Ես աչքերով որոնում էի այն մարդուն, որին ամենքը պարտական էին իրենց աղատութեամբ: Նա այնտեղ չէր, ուր առաջ կանգնած էր: Բայց ես տեսայ, որ մարդիկ զիմում նու դէպի մի կողմ և շտապով վաղեցի այնտեղ: ճեղքելով ամրոխը առաջ անցալ և տեսայ վերատեսչին գետնի վերայ պառկած, զլուխը ծերունի աւագ պահապանի ճնկներին զրած: Նա դունատ էր ինչորէս մահ. շրթունքների վերայ չորացել էր արեան փրփուրը, իսկ նորա մօտ հողը ներկւել էր թարմ արփենով, ամենալաւ մարդու սրաի արիւնով:

Նա մեռաւ, հարցրեց բանտարկեալներից մէկը: Բայց այս հերոսը գեռ չէր կարող մեռնել. նա գեռ մի պարտը ևս ունէր կատարելու: Աչքերով ինձ նշան արեց. ես կուցայ. նրա շրիւնքները շարժւ եցին, բայց ոչ մի հնչւն դուրս չեկաւ բերանից: Զնայելով զրոն, ես հասկացայ նրա ցանկութիւնը և դրկելով նրան, բարձրացրի վեր: Այսպէս բոլոր բանտարկեալները կարող էին անսեղ բարձր ու վսեմ մարդուն, որը բերել էր նոյս այստեղ և այժմ կամենում էր յետ տանել: Նա աչքերով ցոյց տւեց իր ձեռքը. ես վերցրի այն թոյլ ու վալուկ ձեռքը. նա մասով ցոյց տւեց այն ճանապարհը, որով մենք եկել էինք: Զգանուեց մէկը, որ համարձակուել չկատարել այս լուս ու հանդիսաւոր հրամանը: Բանտարկեալները խմբւեցին և կարգով կանգնեցին: Ես և ծերունի Զիւսմիլիսը մեռքերի վերայ տարանք վերատեսչն և բազմաթիւ հանդիսաւոր յուղարկաւութիւնը լուս կերպով վերագարձաւ բանաւու:

Վրայ հասաւ զիշերը, մըրիկը դագարեց, և երբեմն-երբեմն փշող քամին դեռ ևս յիշեցնում էր ամենասարսափելի օրուայ մասին: Բանտարկեալները, որոնք ամբողջ օրը աշխատել էին բանափառից դուրս, քնել էին վերատեսչի խոսացած հանդիսաւ խղճի վափուկ բարձի վերայ: Իսկ ինքը վերատեսուչը նոյնպէս քնել էր. նորա զլխատուկը նոյնպէս փափուկ էր, ինչպէս կարող է լինել մեծ դորձերի համար մեռնող մարդու բարձր:

Զարեւ Զիշենկարեան



ԹՇԻԱՌՆԵՐԻ ՔՈՅՐԸ

(ԷՐԻՒ ԶՈԼԱՅ)

Փոխադր. տիկ. Վարդուհի Շոտ:

Ա.

Ովզ խեղձ աղջիկը ասս տարեկան հասակումն այնպէս ի զմալի՞ էր, որ մարդ ակածայ ցաւ էր զգում, տեսնելով նրան որպէս բանուոր-զեղչկուհի աշխատելիս: Նա ունէր խոսք յառ զրի զգում, տեսնելով նրան որպէս բանուոր-զեղչկուհի գառն մովիտը խաղում էր նրա զէմբին շոր, հիանալի աչքեր և անմռունչ տանչողների գառն մովիտը խաղում էր նրա զէմբին վրայ:

Հարուստ կալւածատէրեն յաճախ տեսնում էին նրան անտառում ցնցոտիներով ծառնուեց մէկը, որ համարձակուել չկատարել այս լուս ու հանդիսաւոր հրամանը: Բանտարկեալները խմբւեցին և կարգով կանգնեցին: Ես և ծերունի Զիւսմիլիսը մեռքերի վերայ տարանք վերատեսչն և բազմաթիւ հանդիսաւոր յուղարկաւութիւնը լուս կերպով վերագարձաւ բանաւու:

— Եկեղեցով գտվթումը մի թշւառ կալ, որը մի բրուգ միամին ունի հաղութ: — Պնեյէք նրա համար մի վերնազգեստ և ես վայր տոզում առանամիքը վրայ կրամանի. — Պնեյէք նրա համար մի զեղջիկի ու տոկուն շրջազգեստ, նա սովորաբար պաշարկում էին զնել աղջկան համար մի զեղջիկի ու տոկուն շրջազգեստ, նա սովորաբար պատասխանում էր:

Այդ պատճառով էլ, ահա, նրան կոչում էին թշւառների Քոյր: Այդ պատճառով էլ կրամանը հեղճութեամբ էր աղջկէս անւանում, նայելով նրա աղքատիկ հաղուսաներին, շատերն էլ — 'ի արիտուր նրա զթարաբութեան:

Մի ժամանակ մէր թշւառների Քոյրը մի շատ զեղջիկի ժանեկաւոր օրօրոց ունէր և այնքան խաղալիքներ, որ կարելի էր նրանցով մի սենեակ լրջնել:

Նրա մայրը մի անգամ, հակառակ իւր սովորութեան, առաւտեան չեկաւ նրան համբուրելու. զրա համար նա լաց եղաւ. մարզիկ յալանեցին նրան, թէ երկնից հրեշտակը նրան տարել էր երկինք: Ովզ լուրը ցամաքացրեց թշւառ Քրոչ արցունքների աղբիւրակը: Մի ամսից նրա հայրն էլ զնաց լուր ամուսնուն քով և մեր աղջիկն սկսեց մտածել, որ Երբ նրանք այնտեղ միանան, անկարող կրլինին եօլա զնալ առանց իրենց աղջկան, ուստի երբ նրանք այնտեղ միանան, անկարող կրլինին եօլա զնալ առանց իրենց աղջկան, ուստի կուղարկեն մի հրեշտակ նրան կանչելու: Նո չիմացաւ այլեւ՝ ինչպէս անլայտացան իւր կուղարկեն մի հրեշտակ նրան կանչելու: Հարուստ օրիորդը գտաւած մի խեղճ աղջիկ և ոչ ոք էլ շրջազգեստ ու խաղալիքները: Երեխ չար մարզիկի էին եկել նրա մօտ և փառաւորապէս թալանել նրա ունեցած շունչեցամբ: Նա այսպահն էր միավուն լուս ու հանդիսաւոր քեռակինը: Աղջիկը խիստ ախրեց, որ նրանք չէին նոյն չիլ'օմ քեռին ու չիլ'օմէտա քեռակինը: Աղջիկը խիստ ախրեց, որ նրանք չէին նոյն չիլ'օմ քեռին ու չիլ'օմէտա քեռակինը: Աղջիկը խիստ ախրեց, որ նրանք չէին նոյն չիլ'օմ քեռին ու չիլ'օմէտա քեռակինը:

6*

Ճեղքից և տարաւ մի ողորմելի հիւզ, որււմ բնակւում էր նա այժմ։ Ահա բոլորը։ Նա ամեն երեկոյ չափաղանց լողնած էր զգում իրան։

Մի ժամանակ Հիլ'օմն ու Հիլ'օմէտտան էլ ահազին կարողութեան աէր էին, բայց Հիլ'օմը սաստիկ սիրում էր գիշերային զւարճութիւններ և փչացած ընկերներ, առանց մտածելու, որ աշխարհում ամեն ինչ վախճան ունի. իսկ Հիլ'օմէտտան հազնուում էր խիստ շքեղ և ամեն կերպ ձգառում էր գեղեցիկ ու երիտասարդ երեալ: Եւ ահա մի գեղեցիկ օր ներքնասատան գինին սպառւեց և հարկ եղաւ հաց զնելու համար ծախել հայելին: Մինչև այդ ժամանակ նրանք ցոյց էին տալիս այն արտառոյ ողորմածութիւնը, որն յանախ ոչ այլ ինչ է, եթէ ոչ ողորմելի ինքնահաւանութեան և տպահովութեան արդասիք: Բաղի գրկումը հրացում էին նորա և այլոց էլ մասնակից դարձնում իրենց երջանկութեանը. այլպիսով բարեգործութիւնն ու ինքնասիրութիւնը շփոթում էին միմեանց հետ: Բայց նրանք չկարողացան սպահանել կեանքի՝ որոշ չափով զրական այդ գծերը ձախորդութեան օրերում ու լարով իրենց կորցրած հարստութիւնը, արցունքները թափում էին լոկ սեփական վշտերի համար. մնացեալ բոլոր անրազդներն այլևս չէին շարժում նրանց կարելցութիւնը: Այս, մոռանում էին նրանք, որ իրենց ձախորդութիւնները հէնց իրենց ծեռքով էին պատրաստւած և մեղաղելով այլոց իրենց տապալման դորժում համակւում էին բուռն վրէժխնդրութեամբ գէպի նրանք: Նրանց ուրախացնում էին Թշւառների Քրոջ ցնցուախները, նրա նիհար, արցունքներից դժգունած այտերը: Նրանք չէին խցնահարուում անդամ մաղաչափ, երբ խեղճ աղջիկը վերադառնում էր աղբիւրից ջրի ծանր կուժն ուսին, երկու ծեռքով պինդ բռնած և նրա ծանրութեան ներքեւ օրօրւելով: Թափած ջրի մէն մի կաթիլի փոխարէն անգութ կերպով ծեծում էին նրան և զեռ աւելացնում, որ հարկաւոր էր ուղղել նրա լիմար բնութիւնը: Եւ նրանք հարւածում էին անխնալ ու ոխտակալութեամբ . . .

Թշւառների Քոյրը պէտք է հոգար նրանց բոլոր կարիքները. նրան յանձնում էին ամենապաժան աշխատանքներն անդամ: Սասարիկ շօքերին նա պէտք է զնար զաշա՝ թափ-թրփած հասկեր հաւաքելու, անառնելի սառնամանիքին ուղարկում էին նրան չոր վասելա-նիւթեր ժողովելու և դեռ վերադարձն էլ պարաւոր էր աւել, լւալ և կարդի բերել բնակարանը: Եւ խեղճ աղջիկն անտրաւնչ տանում էր այդ ամենը: Երշանիկ օրերն անդամ գնացին և նա չէր կարող երեակայել անդամ, թէ կարելի է ապրել առանց արցունք թա-փելու, թէ զոյութիւն ունին ծիծաղկոս, թրժառուն օրինորդներ, որոնք վայելում են ձան-կական զգւանքն ու փայելքները: Նա ամեն երեկոյ ենթակայ էր ծեծի ու փետի, ուտում էր ցամաք հաց և հէնց կարծում էր թէ ինքն էլ ուրիշների նման կեանք է վարում: Խե-լահաս մարզիկ զարմանում էին, աեսնելով այդ տասնամեայ սպատանու խոր կարեկցու-թիւնն այլոց վշտին հանգէպ, ինչպէս երեւում էր. մուտանալով իրու սեփական տանջանքները:

*) Տօւ—սու-ն պղնձէ, նզին իսկ երկաթից ձուլւած, մի փող էր Գրանսիայում որ գործածական էր մինչև 1793 թւականը, մօտաւորապէս 2 կոպէկ արժույթեամբ:

Հիացած, ապօւշ կարած մտնուկների մի մեծ բաղմութիւն խռնել էր մայթի վրայ. նրանցից շատերը յենւելով պատուհանների շրջանակներին՝ աշխատում էին որքան կարելի էր մօտիկ կանդնել ցուցազրւած հետաքրքրիր առարկաներին: Թշտոների Քոյրն, ուղիղն ասած, նախանձում էր նրանց զիրքին. նա մնացել էր փողոցի մէջտեղ, փեացած ծեռները թաղցնելով ցնցուիների մէջ, որոնց բզկտում էր չար քամին: Բայց մի փոքր էլ հալար-թաղցնելով ցնցուիների մէջ, որոնց բզկտում էր չար քամին: Բայց մի փոքր էլ հալար-թաղցնելով ցնցուիների մէջ, որին պիտի հուպ տալով բռան մէջ՝ պատ-առնում էր նա իւր հարսառութեամբ, որին պիտի հուպ տալով բռան մէջ՝ պատ- առնում էր նրանով զնել այն երկար վարսերով սիրուն տիկնիկը, որ ցուցադրւած բասառում էր նրանով զնել այն երկար վարսերով սիրուն տիկնիկը, որ ցուցադրւած էր պատուհանին մէջ: Այդ աիկնիկն աւելի մեծ էր հասակով, քան թշտոների Քոյրը, և նրա մէտաքսեալ հազուսան էլ նման էր Սուրբ Կոյսի հանդերձներին:

Աղջկական պահանջման առաջնային գործընթացը կազմված է հետևյալ համակարգությամբ:

թշւառների Քոյլը կրկին կանգ առաւ, կռնակը զէպի տրկսրպը դարձաւ։ Օրա
ձեռքերը դողլողում էին թշւառ մանկան աղեխարշ արցունքներին հանգեց և նա առանց
այլեւ այլութեան մօտեցաւ թշւառ կնոջը, որպէսզի նւիրէ նրան իւր սիրունիկ, փայ-
լուն սուն։

Կինը բաւական ժամանակից իվեր նայում էր նրան. առ տեսով էր, թէ լուսպ, աղջիկն, հեռուում կանգնած՝ մտիկ էր տալիս և թէ ինչպէս ուզուց նա քայլերը դէպի խաղալիքները. այժմ էրը աեսաւ, որ նա մօտենում էր իրեն, զուշակեց նրա բարի միտքը: Եւ նա արասաւաթոր աչքերով ընդունեց թշւառների Քրոջ ձեռքից սուն ու աչնունետե նրա նիհար ձեռքը վերցնելով իւր բոան մէջ, ասաց.

— Աղջիկս, ես ընդունում եմ քո ողորմութիւնը, բեղ չ' վշատցնելու համար սիածն:

Բայց դու ոչի՞նչ չես ցանկանում. ես թէև սասաիկ վաս եմ հագնեած, բայց կարող եմ քո ցանկութիւններից մէկի կատարել:

— Աղջկիկը բացասարար թափ աւելց իւր շիկահնիք զութը:
— Ոչ, տիկին, — պատասխանեց նա. — Ես ոչ մի ցանկութիւն չունիմ: Թէե ու-
զում էի գնել այն տիկնիկը, որին զուք տեսնում էք ահա, բայց միւնոյն է, քեռակինս
կամ էնալ առաջ տիկնիկը կամէնալ առանց փոխարինութեան ընդունել իմ
կըշարդէր նրան: Բայց նթէ զուք չէիք կամէնալ առանց փոխարինութեան ընդունել իմ
սուն, ասկ դէպքում, խնդրում եմ, ոինդ պինդ համբուրեցէք իւձ . . .

կինը կուցաւ և համբուրեց նրա ճակատը։ Աղջկանն այսպէս լուսց, լուս այդ
հապումից մի նոր կեանք ստացաւ և թէ իւր մշտական թախիծն իսկոյն փարատւեց, միա-
կանը հագուստում կառավագան կառավագան էլ համակեց նրա ամբողջ էութիւնը։

Եւ նա ձեկնեց փողն աղջկաներ. սա մի հին սու էր, զեղին պղնձից ծուլտժ, ծայ-
բեր մաշւած, մէշտեղիցն էլ սոպի մէծութեածք մի ծակ զոյացած։ Նա այնպէս մաշւած
էր, որ նոյն խոկ չէր կարելի իմանալ, թէ որ երկրի փող է. մի կողմը միայն երևում էր
էր, ով նոյն խոկ չէր կարելի իմանալ, թէ որ երկրի փող է. մի կողմը միայն երևում էր

Թշառների Քոյլը աւսնելով, որ սուն խիստ բարակ էր և հասկանալով որ այդ-
պիսի մի նսիրաբերութիւն աղքատիկ կնոջ կողմից չէր կարող որեւէ զրկանք պատճառե-
նրան ու բացի այդ Ընդունելով նւերը օրպէս առհաւատչեաց բարեկամութեան, — նա մեկ-
նեց ձեռքը ընդունելու համար:

ԽԵ՞ղճ, — մասնում էր Թշուաների Քոյլը. — Թշուան կինը չէ խմանում ինչ է խօսում. իշխաններն ու տիկնայքը ի՞նչ կանէին այդ ողորմելի սուն, որը մի ունց հացի գին էլ չունի. ճոյն իսկ աղքատի տալ չի կարելի:

Կնոջ աչքերն աւելի և աւելի բոցավառում էին. նա ժպտաց, կարծես լսելով աղջկայի խօսքերը, և ասաց բնըշըութեամբ.

— Այնուամենայնիւ վերցրու. լետու կիմանաս . . .

Այն ժամանակ, կնոջը չ'ի իրաւորելու համար, աղջիկն ընդունեց նւէրը: Նա կռացաւ և վերցրեց սուն ու զրեց շրջապղեսաի զրպանը, ու երբ ուղղւեց, նստարանը զատարկ դառաւ: Նա շատ զարմացաւ և տուն գնաց, խորասուզւած մտածմունքների մէջ:

2.

Թօշառների Քոյլը պատկեց վերնախարկումը (grenier) — հնամաշ կաւկարասիների բեկորներով շրջապատւած ինչ-որ խրճիթում: Երբ լուսնեակ զիշեր էր լինում, նա պառկում էր լուսով, որովինեաւ նեղլիկ պատուհանիցը ներս էին սովորվում լուսնի ազօտ հառագայթները: Աւրիշ ժամանակ նա մթութեան մէջ խարխափելով էր զանում՝ չորս հատ անտաշ տախտակներից ու լարզեայ մի ծակ ներքնակից (matelas) բաղկացած մահինքը: Այս զիշեր լուսինն իւր բոլոր ցոլքով փայլում էր. լուսեղէն շերտերն ընկել էին տախտակներին վրայ և վերնախարկը լցրել արծաթափայլ շողերով:

Հիմնական ու կինը քան էին մաել, թշնամուների քոյքը կրկին վեր կացաւ տեղիցը . . . Նա սաստիկ սիրում էր զիշերային սիրուն լուսատւին, որը իւր թափանցիկ հառագալթ-ներով վանում էր նրա երկիւզն ու աղջամզային սարսափիները: Լուսնեւակ զիշերներին նա բաց էր անում փոքրիկ պատուհանը և չերծադին շնորհակալութիւն խայտնում լուսնին, որ հաճում է, այցելել իրան: Աղջիկը շատ ուրախանում էր, երբ իւր մօտ լոյս էր աեսնում և այնուհետեւ յանձնելով ընկերուհի - լուսնի խնամքներին՝ հանդիսա ննջում էր: Այս երեկոյ էլ նա ծնրազրեց հին արկղին վրայ՝ ողողւած լուսնի լուսով, աղօթքն արաւ և ապա շրջադրեսան հանեց ու փուեց մահնին վրայ:

Շրջազգեսան ընկել էր յատակին վրայ և ահա նրա կիսաբաց զրպանից պղնձէ մեծ-մեծ սուերի մի տարափ տեղայ: Աղջիկը սասափկ վախեցած, չեր համարձակւում տեղիցը շարժւել: Նա տեսնում էր. ինչպէս սուերը դորուում էին զէս ու դէն: Ի վերջոյ նա սրտապընդեց մի փոքր և սկսեց մի առ զի հաւաքէ: Հայութիւնը առաջ է առաջ գոյացած:

Նա զարսեց սուերը արկղին վրայ, չփորձելով իմանալ նրանց թիւր, որովհետեւ 50-ից սուելի համբել չեր իմանում և շատ լաւ դիմէր, որ նրանց թիւն համառմ էր մի քանի հարիւրների: Երբ բոլոր սուերն հաւաքեց լատակի վրալից, վերցրեց շրջազգեստը և նրա ժանրութիւնից իմացաւ, որ զրպանը լիբն է: 15 բոսկի չափ բռնով զատարկում էր զրպանը և էլի չեր հասնում զրպանի լատակին: Ի վերջոյ զրպանում մնաց մի սու միայն — դա աղքատ կնոշ նուիրած սուն էր: Այժմ միայն հասկացաւ նա, որ այդ սուն Աստուածային մի հրաշք էր և որ իրա արհամարհած այդ չնչին մետաղը մի այնպիսի զանձ էր, իւր մատների արանքում չուներ: Բացի այդ՝ նա զգում էր, թէ ինչպէս սուն գողում էր Քոյրն սկսեց կասկածել նոյնիսկ, թէ մի զուցէ սուի խելքին փէ՝ ամրով վերնայարկը փողով լցնել: Ախար աղջիկն այժմ էլ չեր իմանում ինչ աներ այգքան սուերը, որոնք փայլում էին լուսնի լուսով: Խեղճը սասակի յուղւած, նայում էր շուրջուած:

Որպէս չանասէր աղջիկ, նա միշտ պահում էր իր դուռնոցի զրպանումը թել և ասեղ. վեաու սկսեց սրոնել մի լաթ, որպէսզի նրանից մի քսակ կարէ:

Այնքան նեղիկէ մի քսակ շինեց, որ իւր փոքրիկ ձեռքն հազիւ էր մանում նրա մէջ,
լաթու չ'աւակեանառաւ կարդին մի քսակ կարելու:

Թշնամունք կայացած է ի և ու գույք պատճեն սուբրը քսակում. նախ զրեց աղքատ
թշնամունքի Քոյրն սկսեց հասպճեպով դարսել սուբրը քսակում. նախ զրեց աղքատ
կնոջ տւածը և տպա նրա վրայ սիւնեակներով շարեց միւսները. Ամեն մի սիւնեակ փլչե-
լով՝ լրջնում էր քսակը, բայց մի ակնթարթում էլի քսակը դատարկ էր երկում. Մի քա-
նի հարիւր մեծամեծ սուբր զեղաւորւեցին նրա մէջ, բայց զեռ այդպէս չորսն էլ կարելի
էր աեղաւորել ապահովաբար:

Այնուհետև Թշւառների Քոլը զբեց քսակը ներքնակին առաջ և պառկեց, քուն
եղաւ։ Քնի մէջ ժպտում էր նա և պատրաստում միւս օրն և եթ լիուլի ողորմութիւն
բաշխել երկրի կարօտեալներին . . .

6

Միւս առաւօտեան զարթնելով նրան այնպէս էր թւում, թէ այդ ամենը երազ էր որպէսզի համոզւի այդ բանում, հարկաւոր էր ստուգել եղելութիւնը: Քսակը երեկուանից առաջի ծանր երեաց, չետևալար կախարդական սուն զիշերն էլ անդորք չէր մնացել:

Թշւառների Քոյլը շուտով հաղնեց և ցած զնաց փայտէ սուսակները ժամաքը բլրա-
նած, որպէսպի աղմուկ չ'ըսրծրացնի։ Քսակը ծրարեց թաշկինակին մէջ և թաղցրեց ծո-
ցումը։ Քեռին ու քեռակինը խոր քնի մէջ լինելով չէին լսում նրա ունածայնը։ Աղջիկը
պիտի անցկենար նրանց մահձի մօտից և նա զգալով իրան այդքան մօտիկ զահիներին,
քիչ մնաց ուշաթափւէր երկիւղից։ Ապա նա սկսեց վաղել՝ դռները լախ-լախն բացաւ,
քիչ մնաց ուշաթափւէր երկիւղից։ Այդ բանը պատահեց ձմեռը, զեկանձբերեան յըտաշունչ մի ա-
րայց մոռացաւ փակելու։ Այդ բանը պատահեց ձմեռը, զեկանձբերեան յըտաշունչ մի ա-
ռաւուա, արշալոյսը նոր էր բացւում։ Արեի առաջին ճառագայթներով ոսկեզօծւած երկնա-
կամարը՝ միացած ծիւնապատ պսպղուն երկրի հետ՝ ներշնչում էր մարդկանց սրբազնն ան-
դորրութիւն։ Թշւառների Քոյլն անցնում էր քաղաք տանող ճանապարհով։ ծիւնը նըռ-

Ճամալով դալարւում էր նրա սուսազնութեան գումարը՝ ինչ ջնայած իւր մտասահչութեանը, թշուառների Քոյլը դւարնութեան համար զնում կատարեած էր մեր համար:

Նրանք թափառում էին մեծ հաճապարհների վրայ, քաղաքների ու զիւղերի վողացներում և անցորդներից զժութիւն հայցում և ոքան շատ էին նրանք, Տէ՛ր Աստված :

Թշւառների Քոյրը բաց արեց քստկի լերանը. քաղաք մտնելով՝ նա տեսաւ մի աղքատ ու կոյր ծերունու՝ մի փոքր աղջկայ առաջնորդութեամբ, որը խղճալի կերպով նախուժ էր Թշւառների Քրոջը, երևի վերջնիս աղքատի տեղ ընդունելով, որովհեաւ սրա հաղուստն էլ խսկապէս ողործելի էր:

— Հայրիկ, բայց արէք ձեր ձեռքը, — ասայ Թշնամոների Քոյլը. — Ինձ Տէրն ուղարկեց օվնելու ձեզ:

